ՄԻԼԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ «ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ»

Ա. Կ. ՋԱՐՅԱՆ

XIX դարի կեսերից սկսած, Եվրոպայի ճարտարապետական ֆակուլտետներում, ինչպես, օրինակ, Փարիզի Էկոլ դե Բոզարում, այնպես էլ նախագծողների միջավայրում, տարածում էին գտել Շ. Տեկսիեի և Մ. Բրոսսեի հայկական հուշարձանների և հատկապես Անիի կոթողների քսիլոգրաֆիկ վերարտադրությունները։ Այդ գծագրերը ներշնչանքի աղբյուր էին նախագծողների և ուսանողների համար։ Արևմտաեվրոպացի արվեստագետները՝ Դելակրուան, Գոթիեն և Բոդլերը դիմել են Արևելքին այն ժամանակ, երբ կարծել են, որ էկլեկտիզմը առավել ևս նոր ոճը կենսագործելու ակունքը գտնվում է Արևելքում։ Ահա ստեղծագործական այս ոլորտում, համադրելով արևելյանը և արևմտյանը, կազմավորվեց ու զարգացավ ճարտարապետական նոր ուղղությունը, այսպես կոչված Ար Նուվոն և Ավանգարդիզմը։ Հ. Ֆ. Բ. Լինչը իր «Հայաստան» երկհատոր գրքում նշում է. «Ասիան հասկանալու համար պետք է մոտիկից ծանոթանալ Հայաստանին»։ Այս է այն ճանապարհը, որ մատնացույց արեց Թ. Թորամանյանը, որտեղով անցել են Յ. Ստրժիգովսկին, Յ. Բալտրուշայտիսը, Շարլ Դիլը, իսկ 1966-ից սկսած իտալացի ճարտարապետներ Թ. Բրեչչիա-Ֆրատադոկկին, Պ. Կունեոն, Ա. Ալպադո-Նովելլոն, Ֆ. Գանդոլֆոն, Է. Կոստան։

Դարասկզբի իտալացի արվեստաբաններից Ռիվոյրան, Տոեսկան, Ֆրասսոնը, 30-ական թթ. հետո՝ Զևին, Բենեվոլոն և Պիերոգալլին համառոտակիորեն գրել են հայ ճարտարապետության մասին, բայց դրանցից և ոչ մեկը չէր այցելել Հայաստան, իրենց գիտելիքները նրանք հավաքել էին գրքերից և լուսանկարներից։ Նման մոտեցումը արվեստաբանությանը եթե անցյալում ընդունելի էր, այսօր մերժվում է, քանի որ գիտնականի համար պարտադիր է անձնական փորձառությունը։ Հետևաբար, հարցի լուծումը համագործակցությունն էր, որը հաստատվեց հայ և իտալացի գիտնականների միջև։ Եվ այդ համագործակցությունն էր, որ իտալացի ընկերներս և ես կարողացանք 1963-ին միասին ծրագրել ու իրագործել, երբ 1966-ին Հռոմից Երևան ժամանեցին ճարտարապետներ Պ. Կունեոն և Թ. Բրեչչիա-Ֆրատադոկկին, իսկ 1967-ին Միլանից՝ Արմեն և Հակոբիկ Մանուկյան եղբայրներն ու Ա. Ալպադո-Նովելլոն։ Ծրագրվեց նաև ուշադրության առարկա դարձնել պատմական Հայաստանի հայկական շինությունների ուսումնասիրությանը, իսկ նման աշխատանք հնարավոր էր իրագործել միայն հայ և օտար գիտնականների մասնակցությամբ։ Կարևոր համարվեց հրատարակչական գործունեության ծավալումը Հռոմում և Միլանում, այդ քաղաքներում հիմնադրվեցին «Հայ ճարտարապետության ուսումնասիրության» երկու կենտրոն։ Հռոմում լույս տեսնող գրքերի ծախսերին օժանդակել է «Իտալական գիտահետազոտական կենտրոնը», իսկ Միլանում՝ Օնիկ Մանուկյանի ստեղծած ֆոնդը։ Նպատակադրված լինելով ծանոթացնել հայ ճարտարապետությունը և արվեստը, 1967-ին Արմեն Մանուկյանը և Արմեն Ջարյանը հիմնադրեցին «Հայ ճարտարապետության վավերագրեր» շարքը, հատորները լույս տեսան ԱՌԻՍ հրատարակչությունում, որ հինգ տարի առաջ վերանվանվեց ՕԷՄՄԷ՝ Օնիկ Մանուկյանի անունով։

Այդ մատենաշարից մինչ օրս լույս է տեսել 20 հատոր, բոլորն էլ արդյունք են Միլանի Պոլիտեխնիկումի ճարտարապետական ֆակուլտետի և Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի միջև կայացած գիտական համագոր-

ծակցության։ Հրապարակված հատորներից նշեմ՝ «Հաղպատ», «Խաչքար», «Սանահին», նաև «Անի», վերջերս՝ «Դարաբաղ» և «Սորհուլ»։ Ամեն մի հատոր օժտված է երկու հոդվածով, մեկը հայ և մյուսը օտար մասնագետի կողմից աշխատասիրված։ Գունավոր և սև-սպիտակ լուսանկարները, չափագրությունները, քարտեզները բաղկացուցիչ մաս են կազմում ամեն մի հատորի, այդպես և պատմական համառոտ ժամանակագրությունը, մատենագրությունը, իսկ տեքստերը մասամբ եռալեզու են՝ իտալերեն, անգլերեն, երբեմն հայերեն։ Սա հայ ճարտարապետությունը կառույց առ կառույց գնահատելու, պատմական լայն ընդգրկումներով վերլուծելու փորձ է և կատարվել է, որպեսզի ընկալվի սույն երևույթի ամբողջական արժեքը։ Այս գործին նպաստեց նաև հետևյալը. 1971-ին հարավային Իտալիայի Բարի քաղաքում բացվեց «Հայկական ճարտարապետությունը IV—XVIII դարերում» ցուցահանդեսը, այդ առիթով Ջորջիո Դոնալդո Պեպեն գրեց. «...մի հինավուրց տաղանդ, որը հիմնականում երբեք օտար ազդեցություն չի կրել, մեղ տվեց Մայր Դպրոցի գոյության միտքը, որը ժամանակին տարածվել է իր երկրի սահմաններից դուրս»։

«Վավերագրերի» առաջին համարը վերնագրված է «Հաղպատ» ու լույս է տեսել 1968-ին Միլանի ԱՌԷՍ հրատարակչությունում, տեքստերի հեղինակներն են Ստ. Մնացականյանը և Ա. Ալպագո-Նովելլոն, պատմական ժամանակագրությունը և մատենագրությունը աշխատասիրել է Հ. Վահրամյանը։ Կարծում եմ, որ հարկ է սկզբից ընդգծել հայ և օտար մասնագետների՝ արվեստաբանությանը վերաբերող և իրարից տարբերվող տեսակետները։ Առաջինների համար տարածական արվեստների ուսումնասիրությունը պայմանավորված է պատմաժամանակագրական արժեքներով և կառույցների տիպային հատկանիշների վերլուծությամբ, որոնց հետ է շաղկապված նաև տեխնիկական և գեղագարդարական հատկանիշը։ Արևմտաեվրոպացի արվեստաբանների համար ճարտարապետական ձևը իր առարկայով և խնդիրներով առնչվում է տվյալ դարաշրջանի իմացաբանության հետ և նպաստում մարդ-բնություն-կառույց շաղկապվածությունների հիմնական խնդիրների բացահայտմանը։ Իրար հակադիր, բայց միմյանց ամբողջացնող տեսակետներ, որոնք հարստացնում են ընթերցողի գիտելիքները հայ ճարտարապետության վերաբերյալ։

«Վավերագրերի» մեծագույն մասը նվիրված է վանական համալիրներին. հետևաբար անհրաժեշտ է պարզել հետևյալը. վանքեր հիմնադրելու երևույթը, որը Հայաստանում առաջացավ Բագրատունիների, Արծրունիների ժամանակ ու շարունակվեց Կյուրիկյանների, Զաքարյանների օրոք, նորարարություն էր IV—V դդ. առաջացած մենաստանների, անապատների համեմատությամբ։ Նոր հայեցողությամբ վանքը, սոցիալ-կրոնական պահանջներից ելնելով, հարկ էր կառուցել բնակավայրերին կից, նույնիսկ քաղաքում, օրինակ՝ Անիում։ Հաղպատը, Սանահինը, Տաթևը, Գոշավանքը բոլորն էլ կից են բնակավայրերին։ Նման հեղաշրջումը Հայաստանում առաջացավ IX—X դդ., իսկ Իտալիայի հնագույն վանքերը հիմնադրվել են XIII դարում՝ Ս. Ֆրանչեսկոսի (1208 թ.) և Ս. Դոմինիկոսի (1215 թ.) նախաձեռնությամբ։

Ստ. Մնացականյանը նշում է, որ այդ հոգևոր-մշակութային և արվեստի կենտրոնները պարսպապատված էին ու միավորված ավելի տարածուն ռազմապաշտպանական համակարգերի հետ, հատկապես Ջալալեդդինի արշավանքների տարիներին։ Եվ 1233-ին է, որ Հովհաննես եպիսկոպոսի նախաձեռնությամբ կառուցվել է Կայան բերդը, որը պաշտպանության տակ է վերցրել Հաղպատը և Սանահինը։ Հեղինակը նշում է փոխհատվող երկու զույգ կամարների կիրառումը Հաղպատի տարբեր շինություններում, այն է. XIII դարում Մարիամ իշխանուհու հիմնադրած գավիթը, ուղղաձիգ դասավորությամբ, 1257-ին կառուցված վանահայր Համազասպի եռահարկ գավիթը, հորիզոնական դասավորությամբ սեղանատունը։ VI—VII դդ. դարերում Հայաստանում ստեղծված գմբեթավոր գահլիճը կիրառում է գտել վանքերի վերածնության շրջանում եկեղեցական շինություններում։ Այդպիսին է 976—991 թթ. Խոսրովանուշ թագուհու հիմնադրած Հաղպատի հնագույն եկեղեցին՝

Ս. Նշանը։ Հաղպատում, ինչպես և Սանահինում զանգակատունը, որը եռահարկ է՝ ռոտոնդայով պսակված, կղզիացած է մյուս շինություններից։ XV դարում Լեոնարդո դա Վինչին գրելու էր. «զանգակատունը պետք է անջատ լինի եկեղեցուց, որպեսզի դիտողը կարողանա վայելել երկուսի ամբողջական գեղեցկությունը»։

Մենագրության երկրորդ տեքստը գրել է Ա. Ալպագո-Նովելլոն։ Նա Հաղպատի օրինակով վեր է հանում այն մեծ նշանակությունը, որ ունի ճարտարապետություն-միջավայր կապակցությունը, դրա իմաստը սեփական հողը որպես Մայր ընկալելու զգացմունքի արգասիք է։ Հաղպատի շենքերի հորինվածքային հատկանիշներից է պարզ ձևի մերձակայումը, առդրումը և փոխադարձ ներհատումը՝ իրագործված այնպիսի հնարքներով, որոնք կանխորոշում են կուբիզմը։ Հեղինակի դատողությամբ, հայ ճարտարապետությունը պատմական դաժան իրադարձություններով բնորոշված, ազգային և հոգևոր զորեղ զգացմունքների միաձուլված արտահայտություն է։

Մատենաշարի երկրորդ հատորը վերնագրված է «Խաչքար» և լույս է տեսել 1969-ին։ Հատորը աշխատասիրել են Լ. Ազարյանը և Ա. Մանուկյանը։ Ազարյանի մեկնաբանությամբ խաչքարը քարի հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքի համադրված արտահայտություն է, ունեցել է դամբարանային, նվիրատվական, օտար գերիշխանությունից ազատումը և նոր բնակավայրերի հիմնադրումը հավերժացնելու իմաստ։ Ա. Մանուկյանի կարծիքով, Հայաստանի հողը, ժայռերը պոտենցիալ ուժեր են, որոնք հայ մարդուն մղում են կառուցելու, բայց միաժամանակ շաղկապվելու իր երկրի բնությանը։ Խաչքարը սրբապատկեր է, միաժամանակ ճարտարապետական առկայություն, քանի որ Հայաստանում խաչքարի միջոցով կառույցը կապված է շրջապատին և այս տարրի միջոցով՝ երկրի ամբողջ տարածության հետ։

Երրորդ հատորը «Սանահինն» է, աշխատասիրել են Հ. Խալփախչյանը և Ա. Ալպագո-Նովելլոն, լույս է տեսել 1970 թ., պատմաժամանակագրական հատվածը մշակել է Ա. Զարյանը, մատենագրությունը՝ Հ. Վահրամյանը։ Սանահինը և Հաղպատը կառուցվել են աշխարհագրական (Ալավերդի քաղաքի շրջագիծ) և ժամանակագրական (հիմնադրումը կատարել է Աշոտ Գ Ողորմածը 966-ին) համանման պայմաններում, երկուսն էլ դարձել էին Կյուրիկյանների, Զաքարյանների վարչամշակութային կենտրոններ։ «Հավատքի կառույցներում,—գրում է Ա. Ալպագո-Նովելլոն,—մարդու ինքնադրսևորման բարձրագույն աստիճանը ճարտարապետական ձևն է և արտահայտությունը մարդու և բնության մշտնջենական երկխոսության։ Այս երկարժեք փոխկապակցությունը հայ ճարտարապետության հիմնական նկարագիրներից է։ Հայաստանի լեռների և մարդու կանգնեցրած քարերի միջև,—շարունակում է հեղինակը,—առաջացել է լուռ, բայց համոզիչ երկխոսություն՝ քարերը, որ մարդը պոկել է այն հողից, որի ծնունդն է ինքը և որի մաս է կազմում ամբողջ ժողովուրդը»։ Այս են հուշում Սանահինի Ս. Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիները, երեք գավիթները, գրատունը, զանգակատունը, ակադեմիան և Ս. Գրիգոր մատուռը, որոնց մասին գրել է Հ. Խալփախչյանը։

Չորրորդ հատորը «Ս. Թադեի վանքը», որ լույս է տեսել 1971-ին, աշխատասիրել են Թեհրանի Գերմանական հնագիտության ինստիտուտի տնօրեն Վ. Կլայսը և իրանցի ճարտարապետ Հոսհանգ Սեհիմը։ Ս. Թադեն, Ս. Ստեփանոսը և Ս. Բարդուղիմեոսը հայկական Ատրպատականի ճարտարապետական ամենանշանակալից վանքերն են։ Նոր դասական ճարտարապետության (XVIII—XX) առաջացումը միաժամանակ բնորոշեց Եվրոպայում և Օսմանյան ու Պարսկական կայսրություններում ձևավորված էկլեկտիկ արվեստը, ինչպես և պլաստիկ ձևավորումների «կոյնեն»՝ բազմալեզվությունը։ Այդ շրջանում ձևավորվեց հայ-թուրքական, հայ-իրանական հորջորջվող արվեստը, որի փառահեղ իրագործումներից է 1840-ին Բեհլյուլ Փաշա քուրդ իշխանի հիմնադրած և հայ վարպետների կառուցած Իշաք Փաշա դղյակը Արարատի լանջերին, Ս. Թադեի վանքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա։ «Դղյակի գեղազարդումները հայկական են,—գրում է Ջ. Սկարչիան,—իսկ Ս. Թադեինը իսլամականացված», բայց մոռանում է ասել, որ Ս. Թադեի

Հարտարապետությունը զուտ հայկական է, թեկուզև XIX դարի համար՝ հետահայաց հայացքով իրագործված։ Նշված հեղինակները իրենց տեքստերում նման հարցեր չեն շոշափում, դրանք սահմանափակորեն նկարագրական են։

Հինգերորդ հատորը՝ «Ամբերդը», հրապարակվել է 1972-ին, աշխատասիրել են Ն. Մ. Տոկարսկին և Ա. Ալպագո-Նովելլոն, մյուս հատվածները գրել են Ա. Զարյանը և Հ. Վահրամյանը։ X—XIV դդ. կառուցված այս բերդաքաղաք-ամրոցը, որ տեղադրված է Խաղան և Ամբերդ գետերի միացման տեղում, եռանկյունաձև հրվանդանի վրա, ըստ Տոկարսկու հիմնադրվել է VII դարում Կամսարականների օրոք, բայց և հետևելով Հ. Օրբելուն, Ա. Ալպագոն նշում է պարիսպների որոշ հատվածների Վանի Արարատյան թագավորության շրջանին պատկանելու մասին։ Հեղինակները նկարագրում են Ամբերդի XII—XIII դդ. եռահարկ դղյակը, Արխաշանի դարպասը, 1026-ին Վահրամ Պահլավունու հիմնադրած խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցին, X—XI դդ. բաղնիքը, դղյակի և բերդամիջյան ջրամբարներն ու փոքր մատուռի ավերակները։

ԱՌԵՍ հրատարակչության վեցերորդ հատորը՝ «Գեղարդ», նույնպես 1972-ին լույս տեսած, աշխատասիրել են Ա. Սահինյանը և Ա. Մանուկյանը, իսկ Ա. Ասլանյանը հեղինակել է «Գեղարդի շրջանի երկրաբանական կազմը» ուսումնասիրությունը։ Գիտնականը նշում է, որ բազալտի շերտերը, «որոնց խորքում փորված է Գեղարդի շենքերի մեծ մասը, որոշ ընդհատումներով հասնում են մինչև Էգեյան ծով և Ուրմիա լիճ, ու այդ շերտերը բնույթով նույնանման են Կապադովկիայի ժայռերին»։ Հ. Վահրամյանը պատրաստել է հատընտիրում հրապարակված 86 վանքերի ցուցակը և քարտեզը։ Ա. Սահինյանի տեքստը պատմաճարտարապետական է, Ա. Մանուկյանինը քննարկում է վիմափոր և վերգետնյա շենքերի ճարտարապետական ձևերը։

1973-ին հրապարակված յոթերորդ հատորը հասարակության ուշադրությանն է ներկայացնում Իջևանի շրջանում XII—XIII դդ. կառուցված «Գոշավանք» վանական համալիրը, որը 1188-ին Իվանե Զաքարյանի աջակցությամբ հիմնադրել է Մխիթար Գոշը։ Տեքստերը հեղինակել են Ա. Զարյանը, որը կազմել է նաև ժամանակագրությունը և մատենագիտությունը, իսկ երկրորդ տեքստը՝ «Պատմական համառոտ ակնարկ Հայաստանի վանական կյանքի մասին», մշակել է Հ. Վահրամյանը։ Ա. Մովսիսյանը և Ս. Երեմյանը պատրաստել են «Միջնադարի հայկական մշակութային կենտրոններ» վերնագրված քարտեզը։ Հատորում պատկերված սև-սպիտակ և գունավոր լուսանկարների ու չափագրությունների շնորհիվ մեր աչքի առաջ բացվում են Գոշավանքի Ս. Աստվածածին, Ս. Գևորգ, Գրիգոր Տղայի 1231-ին կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, ժամատունը, գրադարանը, Մխիթար Գոշի դամբարանը և մոտակայքի Ս. Գևորգ (1254) գմբեթավոր փոքր մատուռը, իրենց ճարտարապետական և գեղաքանդակային մանրամասներով։ Հեղինակների հատուկ ուշադրության առարկա է վարպետ Պողոսի խաչքարը (1291), պատմական վկայություններից (Կիրակոս Գանձակեցի) և ոճական առանձնահատկություններից ելնելով բնութագրվել են «Հյուսն» մականունով Մխիթար վարպետի, Գրիգոր և Զաքիոս ճարտարապետների գործերը։

Առանձնապես արժեքավոր է 1974-ին լույս տեսած «Աղթամար» հատորը (ութերորդ), որ աչքի է ընկնում պոլիգրաֆիկ բարձր մակարդակով, ճոխ և ճաշակով ձևավորմամբ։ Հիմնական տեքստը աշխատասիրել է Հ. Վահրամյանը, իսկ Ս. Խաչի ներքին որմնանկարների մասին գրել է Ս. Տեր-Ներսեսյանը, արժեքավոր են նաև իտալացի լուսանկարիչ Ջ. Նոգարոյի հստակ վերարտադրությունները, որոնց հետ գրքում ընդգրկված են Ս. Խաչի ճակատների մանրամասն գծագրերը։ Նրանցից ընտրվել են քանդակներին վերաբերող ամենաարժեքավորները։ Հ. Վահրամյանի պատրաստած հատորը (վերջերս լույս տեսավ գերմաներեն լեզվով) ճարտարապետական մանրամասնությունների առումով (թե՛ եկեղեցու պատերը դրսից շրջապատող բարձրաքանդակ գոտիների, թե՛ որմնանկարների) տալիս է X դարում Գագիկ Արծրունի թագավորի՝ Վանա լճի Աղթամար կղզում կառուցած բերդ-քաղաքի արքայական եկեղեցու ընդհանուր պատկերը։

«Երերույքը» շարքի իններորդ հատորն է, լույս է տեսել 1977 թ., տեքստերը գրել են Ա. Ալպագո-Նովելլոն և Փ. Փափուճյանը Հալեպից, պատմաժամանակագրական տվյալները՝ Տ. Ն. Գուլումճյանը, հատորում արտատպվել են նաև Ն. Մառի 1914 թ. արած լուսանկարները։ Իտալացի մասնագետի գլխավոր միտումն է գոնե տեսականորեն վերականգնել Երերույքի ամբողջական կառույցի համակարգը, հատկապես նավերի և բեմի ծածկերը, և այդ առումով նա նշում է կարևոր այն փաստը, որ Ն. Մառը պեղումների ընթացքում հայտնաբերել էր թաղակիր մույթերից մեկի հիմքերը (հետագայում անհետացած) խաչի ձևով շարված։ Մույթի այդ ձևը առանձնապես ազդեցիկ եղավ եռանավ բազիլիկաների զարգացման համար։ Փ. Փափուճյանի գլխավոր միտումն է պարզել թերևս խորապես չուսումնասիրված հայ-ասորական արվեստների փոխազդեցությունների հարցերը, առանց, սակայն, պարզելու այդ արվեստների միջև գոյություն ունեցող ընդհանուրը և միաժամանակ տարբերակիչը և առանց հիմնավորելու Ասորիքի ճարտարապետության թողած ազդեցությունների պատճառները։

«Վավերագրեր» շարքի տասներորդ հատորը նվիրված է Ս. Ստեփանոս Նախավկա վանքին, տեղադրված Ջուղայից 15 կմ արևմուտք՝ Ատրպատական գավառում։ Հատորը լույս է տեսել 1980-ին, տեքստերը գրել են գերմանացի Հ. Հոֆրիխտերը և Գ. Ուլուհոճյանը Իտալիայից, իսկ պատմական ակնարկը աշխատասիրել է Ա. Հախնազարյանը Ախենից։ XVII դարում կառուցված, հզոր պարիսպներով և բոլորաձև աշտարակներով ամրացված Ս. Ստեփանոսի ճարտարապետությանը բնորոշ են հայկական դասական եկեղեցական ձևերը և կառույցների ներսում (արտաքին պատերը քարաշեն են, իսկ ներքինները՝ աղյուսակերտ) տեսանելի է Սեֆյան դարաշրջանին հատուկ ջիլերի կամարաձև համակարգը (հատկապես փոխանցումների և թմբուկի մակերեսների վրա)։ Այս երևույթը, որ Հայաստանում զարգացել է XVII—XVIII դդ., կոչվում է հայ ճարտարապետության նոր «Վերածնունդ», որը հատուկ է նաև Ս. Թադեի վանքին, Էջմիածնի Մայր Տաճարի ներքին հարդարանքներին, բնորոշվում է նաև որպես հայկական «Բարոկ» և տարածում գտավ Նոր Ջուղայի շինություններում։

Տասնմեկերորդ հատորը «Կեչառիսն» է։ Հատորը լույս է տեսել 1982-ին, տեքստերը աշխատասիրել են Մ. Հասրաթյանը և Ա. Ալպագո-Նովելլոն։ Մ. Հասրաթյանը հակիրճ, բայց դիպուկ բնութագրումով որոշակի պատկերացում է տալիս Ծաղկաձորում Պահլավունիների հովանավորությամբ և Գրիգոր Մագիստրոսի նախաձեռնությամբ կառուցված Կեչառիսի վանքի (X—XIII դդ.) մասին։ Հեղինակը բնորոշում է ճարտարապետական տարրերի, տիպերի՝ գմբեթավոր դահլիճի, ինչպիսին են Ս. Գրիգոր Լուսավորիչ (1033 թ.), Ս. Նշան (XI դար) եկեղեցիները, ներգծված խաչով Կաթողիկեի և գավիթի դասական ձևի կարևորությունը։ Նկարագրում է Վեցիկ ճարտարապետի գործերը ու ամփոփում շարադրանքը՝ մեկնաբանելով X—XII դդ. բարձրարվեստ խաչքարերի նշանակությունը։ Ալպագո-Նովելլոյի կարծիքով, այդ դարաշրջանի հայկական արվեստը ձևավորվել է պատմական երեք եղելությունների ոլորտում. Բյուզանդիայի մղած պայքարը Հայաստանի դեմ, սելջուկների արշավանքները և Հայկական Կիլիկիայի կազմավորումը որպես Արևելք-Արևմուտք կապերի արդյունք։

Համար տասներկուսը վերնագրված է «Անի»։ Այդ փառահեղ հատորը հրապարակվել է 1984-ին, հոդվածների հեղինակներն են՝ Պ. Կունեո, Ա. Զարյան, Գ. Ուլուհոճյան, Ն. և Մ. Թիերրի ամուսինները։ Անիագիտությունը այսօր բավական զարգացած է ու պիտի կատարելագործվի այն ժամանակ, երբ տեղի ունենան նոր պեղումներ։ Այդ գիտության կարկառուն դեմքերից են Պ. Կունեոն և Մ. Թիերրին։ Քննարկվող հատորում իտալացի հեղինակը վերլուծում է «Անի քաղաքի ճարտարապետությունը», շենքերի ու քաղաքաշինական համակարգի յուրահատկությունները։ Պ. Կունեոն լուսաբանում է Բագրատունիների հիմնադրած մայրաքաղաքի կառույցներին հատուկ գեղարվեստական արժեքները, ձևերի դասականությունը, շինարարական նորաստեղծ համակարգերի ընդհանրությունն ու տարածումը Եվրոպայում և կիրառումը

ռոմանական գոթական շինություններում։ Մ. Թիերրին հատուկ հմտությամբ ներկայացնում է Անիի ամեն մի շենքին հատուկ տիպային հատկանիշը, պատմաշինարարական հակիրճ նկարագրությունը։ Ա. Զարյանը ներկայացնում է Անին որպես երկհարկանի քաղաք՝ վերգետնյա և ստորգետնյա և շեշտում, որ այդ տիպի քաղաքը կառուցվեց Հայաստանում այն շրջանում, երբ Եվրոպայում տեղի ունեցավ քաղաքների Վերածնունդը, բայց դրանցից ոչ մեկը չի կառուցվել երկհարկանի։ Գ. Ուլուհոճյանը ի մի է բերել Անիի պալատի և եկեղեցիների պատերին փորագրված հայատառ արձանագրությունները և այն, ինչ շատ կարևոր է, թարգմանել է իտալերենի։ Ն. Թիերրին իր «Անիի որմնանկարները» հոդվածում առաջադրում է այն տեսակետը, թե Հայաստանում VII դարից հետո հայերը չեն ունեցել որմնանկարչության դպրոց, հետևաբար Անիի նկարները վրացի նկարիչների գործեր են։

Նույն 1984-ին լույս տեսավ «Հաղարծին» մենագրությունը՝ Ա. Զարյանի և Ա. Մանուկյանի աշխատասիրությամբ։ Քննարկվող հատորում Ա. Զարյանի ուսումնասիրության առանձնահատկությունը այն է, որ նա Հաղարծինի հատակագծային-ծավալային ընդհանուր համակարգը դիտում է որպես «Իդեալական Քաղաքի» գաղափարը առարկայացնելու միտում։ 1071-ին հիմնադրված Հաղարծինի հատակագծային դասակարգումը եռակազմ է՝ սրբազան շրջան (Ս. Աստվածածին, 1072—1281, Ս. Գրիգոր Լուսավորիչ, X—XI դդ., Կաթողիկե, XII—XIII դդ., Ս. Ստեփանոս, 1244), աշխարհիկ շրջան (սեղանատուն, 1248, օժանդակ շինություններ) և միջանկյալ շրջան (երկու ժամատուն)։ Նման սկզբունքով են կառուցված Դադիվանքը, Գոշավանքը, Ս. Հակոբ վանքը, Նարեկավանքը։ Արվեստի քննադատության բնագավառում կա դիալեկտիկային հակադրվող իմացաբանական՝ բնազանցական մոտեցում, որը հատուկ է Ա. Մանուկյանի մտածողությանը։ Այս հեղինակի կարծիքով, հարկ է մոտենալ Հաղարծինին ու ընկալել նրա ճարտարապետական ձևերից, ծավալներից, գմբեթներից և գմբեթարդներից՝ այդ «քարե երկինքներից» արտահոսող հոգևոր ուժը անսկիզբ ու անվերջանալի, որը հայի հոգու հավիտենականության զգացումը սնող իսկական ավանդական կենարար ավիշ է։

Վավերագրերի շարքից տասնչորսերորդը՝ «Ամաղու Նորավանքը» հրապարակվել է 1985-ին, տեքստերի հեղինակներն են Ա. Ալպագո-Նովելլոն և Տուրինի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի դասախոս Ջ. Յենին, իսկ պատմաժամանակագրական հատվածը և մատենագիտությունը պատրաստել է Մ. Հասրաթյանը։ Սյունյաց աշխարհի Վայոց ձորի գեղեցկուհի Ամաղու Նորավանքը, Օրբելյան իշխանների կառուցած (XIII—XIV դդ.), շրջապատի կուսական բնությանը համադրված, լեռների կարմրամանուշագույն ժայռերի քարերով կերտված, հոյակապ և եզակի շինություն է, Օրբելյանների տոհմական տապանատունը։ Այստեղ XIII դարի II կեսին գործել է ճարտարապետ Սիրանեսը, XIV դարում՝ քանդակագործ ճարտարապետ Մոմիկը։ Հեղինակները հանգամանորեն են վերլուծում համալիրի մաս կազմող Ս. Կարապետը (1221—27), գավիթը (1261), հատկապես Բուրթելաշեն երկհարկանի դամբարան եկեղեցին (1339) ու էական համարում ընդգծել Վայոց ձորի նաև տեսականորեն ձևավորված արվեստների դպրոցի կարևորությունը, բացահայտում նրա սահմանները, նրա տեղը արվեստի պատմության ոլորտում։ Նման իրավիճակում Մոմիկը գնահատվում է որպես վերածննդյան տիպի բազմարվեստ ստեղծագործող։

Կանգ առնենք շարքի տասնհինգերորդ հատորի վրա, որը վերնագրված է «Քասաղի վանքեր», լույս է տեսել 1986-ին, աշխատասիրել են Ա. Յակոբսոնը, Կ. Ղաֆադարյանը և Վենետիկի արևելագիտության ինստիտուտից՝ Ջ. Կուրատոլան, իսկ լրացուցիչ հատվածները՝ Հ. Վահրամյանը։ Այս հատորից սկսած հրատարակչությունը կոչվում է ՕԷՄՄԷ՝ Օնիկ Մանուկյանի անունով։ Առաջին ուսումնասիրությունը Հովհաննավանքն է, երկրորդը՝ Սաղմոսավանքը, իսկ Կուրատոլան իր հոդվածը վերնագրում է «Հայկական և սելջուկյան ճարտարապետություն. փորձ վերլուծության» ու ցույց տալիս, որ «ճարտարապետության ամենահետաքրքիր հարցերից է այն կապը, որ Միջ-

նադարում գոյություն է ունեցել հայ և սելջուկ վարպետների միջև։ Սակայն, ճշտում է հեղինակը, նման կապերին վերաբերող բոլոր խնդիրները, թերևս կարոտ են լուսաբանման ու մշակութային աանչությունների իմաստով արժանի են լուրջ ուշադրության։ Ղաֆադարյանի և Յակոբսոնի հոդվածները պատմանկարագրական բնույթի են, հմուտ վերլուծություններով հարստացած։

Շարքի տասնվեցերորդ հատորը նվիրված է «Պտղնի-Արուճ» հուշարձաններին, հրապարակվել է 1986-ին, տեքստերի հեղինակներից Ա. Զարյանը գրել է «Գմբեթավոր դահլիճի առաջացումը և զարգացումը» թեմայի մասին, իսկ երկրորդ հեղինակը՝ Ֆ. Գանդոլֆոն, «Հայկական գմբեթավոր դահլիճներ» հարցի շուրջ։ Նշեմ նաև, որ այս համարից սկսած, ՕԷՄՄէ հրատարակչությունը որոշել է ընթերցողին ներկայացնել ճարտարապետական տիպերին վերաբերվող համեմատական տախտակներ։ Այս նպատակով հատորի երկրորդ մասում ներկայացված են գմբեթավոր դահլիճների՝ Զովունիից մինչև Հոռոմոսի վանքը, նույնատիպ կառույցների 21 օրինակ, որոնց մասին, առանձին-առանձին, տրված են ճարտարապետական-պատմական հակիրճ տեղեկություններ։ Տեքստերում արժեքավոր է հեղինակների քննադատական վերաբերմունքը գմբեթավոր դահլիճի ծագումնաբանական հարցերի վերաբերմամբ։ Ըստ օտար մասնագետների այս ձևը ևս օտարամուտ է, և Ֆ. Գանդոլֆոն այն բխեցնում է սասանյան Ղադա պալատի նախամուտքի տիպից։ Սակայն Ա. Զարյանը գրում է, որ Պտղնի, Արուճ, Դմաշեն ճարտարապետական տիպը իրականում ծագել է Հայաստանում. Յ. Ստրժիգովսկին այդ տիպը անվանել է գմբեթավոր դահլիճ, իսկ Ա. Սահինյանը նոր փաստերով ապացուցել է նրա հայկական լինելը։ Պատմական իրողությանը համաձայն, շարունակում է հեղինակը, գմբեթավոր դահլիճը թե՛ Պարսկաստանում և թե՛ Եվրոպայում, XVI դարից առաջ տարածում չի ունեցել, մինչդեռ Հայաստանում դա հետևանք եղավ այն երևույթի, որ հեղինակն անվանում է ձգտում դեպի գմբեթը։

Հատորներից տասնյոթերորդը վերաբերում է Արցախի «Գանձասար» կաթողիկեին, աշխատասիրել են Բ. Ուլուբաբյանը և Մ. Հասրաթյանը, որը միաժամանակ պատրաստել է ժամանակագրական ակնարկը և մատենագիտությունը։ Հատորը լույս է տեսել 1987-ին, թերի վիճակում՝ չեն տպագրվել համալիրի լրիվ չափագրությունները։ Հայկական Արցախին և Գանձասարին վերաբերող այս երկու հմտալից ուսումնասիրությունները՝ «Պատմական ակնարկ Աղվանքի և Արցախի մասին» ու «Գանձասար վանքի ճարտարապետությունը» հանրամատչելի կերպով ներկայացնում են արցախյան լավագույն գլուխգործոցներից մեկը և երևան հանում հայկական արվեստը իրանականից և սելջուկյանից տարբերող ազգային, ինքնատիպ յուրահատկությունները։ Ուլուբաբյանի և Հասրաթյանի հոդվածները արժեքավոր են հատկապես Արցախի ճարտարապետական և քանդակագործական դպրոցը քննելու առումով։

Հատորներից՝ «Սևանը» հրատարակվել է նույն տարին՝ 1987-ին, այն հեղինակել է Ստ. Մնացականյանը, իսկ պատմական ժամանակագրությունը և մատենագիտությունը պատրաստել է Հ. Վահրամյանը։ Առաջին անգամ լինելով հեղինակը բնորոշում է այն կարևոր երևույթը, որի համաձայն իրար են կապված աշխարհագրական միավորը՝ Սևանի լիճը ու նրա ավազանի շրջապատում կառուցված եկեղեցիները, վանքերը և Նորատուսի IX—XIV դդ. հրաշակերտ խաչքարերը։ Բոլոր կառույցները պատկանում են Սյունիքի Սեվանի ավազանի ճարտարապետական դպրոցին։ Հետաքրքիր է նշել, որ այդ վանքերի մեծ մասի կառուցումը հովանավորել են կանայք՝ Աշոտ Բագրատունու դուստր Մարիամը նպաստել է X դարում լճի կղզում հիմնադրված Ս. Աստվածածին և Ս. Առաքելոց վանքերի շինությանը. այդպես էլ Վանեվանը և Շաղակավանքը։ Գնդեվանքը, Արփա գետի ձախ ափին, 936-ին կառուցել է տվել Սյունյաց Սոփի իշխանուհին։ Հայ ճարտարապետության պատմության էջերում Սևանի ավազանը և շրջակայքը բացառիկ տեղ են բռնում. այնտեղ են Ռուսա I-ի՝ Կամոյի մոտ ժայռի վրա կառուցված «Խալդի աստծու քաղաքի», Վանեվանի և Ծովինարի միջև «Թեյշեբա աստծու քաղաքի» ավերակները,

այնտեղ են IX—XI դդ. կառուցված Մաքենաց վանքը, Մասրուց անապատը, Հայրավանը, Կոթավանքը, այսինքն կենտրոնագմբեթ կառույցների բոլոր տիպերը։

1988-ին, Արցախը Հայաստանին միավորելու համազգային շարժման օրերին, արվեստասերներին ներկայացվեց «Ղաբաբաղ» հատորը անգլերեն և իտալերեն լեզուներով, Մ. Ա. Լալա Կոմնենոյի, Պ. Կունեոյի և Ս. Մանուկյանի տեքստերով։ Այս համարից սկսած, վավերագրերի շարքում ուսումնասիրվում է նաև աշխարհիկ ճարտարապետությունը։ Արցախցի ճարտարապետներ Մանուել Սարգիսյանը, Արթուր Արզումանյանը և Էմիլ Աբրահամյանը չափագրել, լուսանկարել և ամփոփ տեքստով ներկայացրել են Հադրութի շրջանի Վերին Թաղ գյուղը (այսօր ազերների ձեռքում)՝ բնակելի տների տիպերով, տեղանքի լեռնային բնույթից բխած գյուղի քաղաքաշինական համակարգը։ Մ. Ա. Լալա Կոմնենոն գրել է «Ղարարաղի ճարտարապետությունը» վերնագրված հոդվածը, որի նպատակն է բացահայտել, դասակարգել և մեկնաբանել Արցախում գոյություն ունեցող մելիքների պալատների (Գուլիստան, 1782) և եկեղեցիների տիպերը (Օխտոնիվանք, Միծեռնավանք, Դադիվանք, Գտիչ, Գանձասար), իսկ Պ. Կունեոն ներկայացնում է Արցախի 99 եկեղեցիների և 6 վանքերի համեմատական տախտակները և ցուցակը։ Ս. Մանուկյանը գրել է «Արցախի համառոտ պատմությունը»։

Հայ ճարտարապետության վավերագրեր շարքի վերջին համարը՝ քսաներորդը, վերնագրված է «Սորհուլ». հատորը պատրաստել և աշխատասիրել է Ա. Ալպագո-Նովելլոն։ Գրքում հրապարակված է նաև Թեհրանի հայկական եկեղեցական թեմի կողմից պատրաստված շատ կարևոր ցուցակ, ուր նշված են Իրանում գտնվող հայկական եկեղեցիների անունները, դրանց քանակը, վայրը, կառույցների շինությունների տեսակները և ամեն մի շինության այսօրվա վիճակը։ Հեղինակը «Պատմական ակնարկ» հոդվածում հատկապես անդրադառնում է իտալացի ճանապարհորդներ Մարկո Պոլո, Ջովաննի դել Պիան դել Կարպինե և Օդորիկո դա Պորդենոնե հեղինակների Թավրիզին վերաբերող հուշերին։ Հեղինակը, որը եղել է Իրանում 1976—77 և 1984 թթ., կատարել է հայ և հայ-իրանական ճարտարապետական գիտահետազոտական ուսումնասիրություններ, հովանավորվել է Թեհրանի հայկական համայնքի և Իտալիայի դեսպանության կողմից։ Նրա հետ աշխատել են Գ. և Հ. Ուլուհոճյանները, Ն. Վեկկիոնեն և Վ. Ֆ. Պիաչենտինին։ Այսօր Ա. Հախնազարյանի և Հ. Հոֆրիխտերի հետ Ալպագո-Նովելլոյին կարելի է համարել Իրանում հայերի կառուցած գյուղերի, թաղամասերի, ամրապատ վանքերի և եկեղեցիների լավագույն գիտակներից մեկը։ Այդ մասին է վկայում նաև «Սորհուլ» հատորը։

ՕԷՄՄԷ հրատարակչությունը նպատակ ունի շարունակել հրատարակչական գործունեությունը, արվեստասերներին ներկայացնել Վասպուրականի, Հայկական Տայքի, Հայկական Կիլիկիայի և գաղթօջախների հայերի կառուցած շինությունները։ Ծրագրված է օտարներին ներկայացնել հայ ժողովրդի ստեղծած հանճարեղ ճարտարապետությունը։